ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
Աննա Ժամակոչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
ՀՀ ԱՍՀ նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Հոկտեմբերի 14-18-ը,
Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն

4. **Հրավիրող կողմը.**
Բրազիլիայի Դաշնային Հանրապետության հետ համագործակցությամբ Բրազիլիայում Պարենի համաշխարհային ծրագրի գերազանցության կենտրոն

5. **Գործուղման նպատակը.**
Ուսումնասիրել
   - Բրազիլիայում գործող դպրոցական սննդի պետական ծրագրի փորձը և դրա փոխկապակցվածությունն աղքատության հասցեագրման և սննդի ապահովման այլ ծրագրերի հետ,
   - միջգերատեսչական համագործակցության ինստիտուտները բազմաթիրախ քաղաքականություններում:

6. **Քննարկված թեմաները.**

Քննարկվել են և ուսումնասիրվել են Բրազիլիայում գործող դպրոցական սննդի ծրագիրը, դրան համակցված անապահով ֆերմերային տնտեսությունների կենսակայունացման նպատակով փոքր ֆերմերների ասոցիացիաների ձևավորման և տեխնիկական աջակցության ծրագիրը, պետական գնումներում փոքր ֆերմերներից պարտադիր մրցութային գնումների ծրագիրը, սոցիալական ճաշարանների ծրագիրը: Բացի այդ, քննարկվել են բոլոր ծրագրերի սիներգիայի ապահովման բազմաթիրախ քաղաքականությունները և թվային լուծումները: Քննարկվել են նաև սննդի ապահովման քաղաքաղականություններում բազմաշահառու (մասնավոր կողմի հետ) համագործակցության ինստիտուտները:

Ի թիվս այլ հարցերի երկկորդմ հանդիպման շրջանակներում քննարկվել են Բրազիլիայում սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական 3 հենասյունները և դրանց ներքո գործող ծրագրերը, Հայաստանում անապահովության

հասցեագրման և սննդի քարտերի ներդրման ընթացիկ ռեֆորմները, փոխադարձ փորձի փոխանակման հնարավորությունները:

Բրազիլիայում ՀՀ դեսպան Ա. Եգանյանի հետ քննարկվել է Բրազիլիայի կողմից նախաձեռնված Սովի և Աղաքատության դեմ Գլոբալ Ալյանսին (Գլոբալ ալյանս) ՀՀ միացման հնարավորությունը, դրանից բխող պարտավորությունները և իրավունքները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հոկտեմբերի 14 ՝

- Բացման նիստ՝ կազմակերպված Բրազիլիայի ազգային կրթական զարգացման հիմնադրամի (FNDE) և Բրազիլիայի համագործակցության գործակալության (ABC), Պարենի Համաշխարհային ծրագրի հետ:
- **Նիստ 1.** Ներկայացում. Դպրոցական սննդի ծրագիրը Հայաստանում
- **Նիստ 2.** Ընդհանուր ներկայացում PNAE-ի և Ազգային դպրոցական սնուցման ծրագրի (NSP) ֆինանսավորման վերաբերյալ (տեխնիկական հանդիպում/սեմինար):
- **Նիստ 3.** Ագրարային զարգացման նախարարության (MDA) և Բրազիլիայի Առողջապահության Կարգավորող Գործակալության (ANVISA) աշխատանքների հիմունքները՝ հիմնական ծրագրերը և քաղաքականությունը փոքր գյուղատնտեսների համար, ներառյալ ուսուցումը, ինստիտուցիոնալ ձեռքբերումները մանր գյուղատնտեսներից, սանիտարական ընթացակարգերը և այլ թեմաներ:
- **Նիստ 4.** ԵԽ/ՊՀԾ աշխատանքի ներկայացում:

Հոկտեմբերի 15՝

- **Դաշտային այց 1**

  Լոգիստիկ հանգույց փոքր գյուղատնտեսների արտադրանքի սառնարանային պահեստով
- **Դաշտային այց 2**
  - Գյուղական սեփականություն (փոքր կոոպերատիվ/ասոցիացիա, որ իր ապրանքները վաճառում է PNAE-ին):
  - Այց EMATER-DF-ի (Տեխնիկական աջակցության և գյուղական գործունեության ընդարձակման ընկերություն) հետ

Հոկտեմբերի 16՝

- **Դաշտային այց 3**

  Այցելություն քաղաքային դպրոց
- **Դաշտային այց 4**

  Այց սոցիալական(«Restaurante Popular») ճաշարան

- **Ընդունելություն** Բրազիլիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը

Հոկտեմբերի 17՝

- **Դաշտային այց 5**
  Գյուղական դպրոց (դպրոցներից մեկը, որը ապրանքներ է գնում մանր գյուղատնտեսներից)
- **Նիստ 7.** Երկկողմ հանդիպում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Սոցիալական զարգացման նախարարության Սննդի անվտանգության և սնուցման ազգային քարտուղարի (SESAN/MDS) հետ

Հոկտեմբերի 18՝

- **Նիստ 9.** Ազգային դպրոցական սննդի խորհրդի (CONSEA) աշխատանքը
- **Փակման նիստ.**
  - Պատվիրակության և ԵԽ-ի հետ փորձի փոխանակման այցի արդյունքների ամփոփում
  - Հետագա քայլերի վերաբերյալ քննարկում:
- Բրազիլիայում Հայաստանի դեսպանատանը Հայաստանի Հանրապետության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության պետական դրոշների փոխանակման արարողություն

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
   Որոշվել է երկու երկրների մասնագետների համար աշխատանքային առցանց հանդիպում կազմակերպել Անապահովության և սովի դեմ պայքարի հիմնական պետական ծրագրերի փոխադարձ ներկայացման նպատակով: Որպես մասնագիտական փորձի փոխանակման հարթակ կարող է ծառայել Գլոբալ ալյանսը (G20 քարտուղարությամբ հիմնադրված)՝ Հայաստանի կողմից ալյանսին միանալու դեպքում:
   Բրազիլիայի կողմից նախաձեռնված Գլոբալ ալյանսին ՀՀ միացման հնարավորության նպատակով որոշվել է լրացուցիչ կարծիքներ հավաքագրել շահագրգիռ նախարարություններից, ինչպես նաև նախարարի տեղակալների հետ Հայաստանում համատեղ քննարկել Հայաստանի կողմից ալյանսում դերակատարության ցանկալի ուղղությունները:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

   Հաշվի առնելով աշխատանքային քննարկումները առաջարկում եմ Բրազիլիայի կողմից նախաձեռնված Գլոբալ ալյանսին ՀՀ միացման հնարավորությունը դիտարկել դրական լույսի ներքո՝ Հայաստանի կողմից ալյանսում տեխնիկական աջակցության դեր վերցնելու հանձնառությամբ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**:

X _____